

ու Մերիկայի ամէն երեւելի մետաղի
հանքերուն մէջ յայտնի կը տեսնուի,
որ որչափ գետնին երեսէն դէպ'ի խո-
րը կ'իջնանք, այնչափ աւելի կը գըտ-
նենք վարի տաքութիւնը. և աս ջեր-
մութեան աճումը եթէ անկանոն ըլ-
լար, այլեայլ պատճառի կրնար տը-
րուիլ. բայց կը տեսնենք որ ամէն աշ-
խարհք մի և նոյն խորութեան մէջ
նոյն կանոնով կ'աւելնայ ջերմու-
թեան աստիճանը, ու միշտ միակերպ:
Չէրմութեան կանոնաւոր աճումը
յայտնի ապացոյց է որ աս տաքու-
թիւնը արեգակէն կախմունք չունի,
հապա բուն երկրիս յատուկ է: Ինդ-
հանրապէս ամէն մէկ 24 կամ 27 ոտք
գետնին խորը մտնելուս՝ ջերմու-
թիւնը մէկ աստիճան աւելի կը գըտ-
նենք. աս հաշուով գետնին կէս մղո-
նի չափ խորութեանը մէջ ջուրը պէտք
է որ եռացած գտնենք, քսան մղոն
խորութեան մէջ ալ ամէն նիւթ՝ ա-
մէն մետաղ հալած: Իսկ և հա եր-
կրաբաններուն վարդապետութիւնը,
ու անոր ստուգութիւնը: Եւ յիշուի,
ասով խիստ լաւ ու դիւրաւ կը մեկ-
նուին լերանց գօտիներուն կազմուած-
քը, կոնաձև լեռներուն ու ժայռե-
րուն սկիզբը, և անոնց վրայ գտնուած
այնչափ երկրաբանական երեւոյթնե-
րը, որ ջրի վարդապետութեամբ չեն
կրնար մեկնուիլ:

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երբեք չլայ գլխաւոր տեղերուն երկայն
օրերը:

ԱՆՈՒՅՆ ՏԵՂԵԿՆԵՐ. ԼՍՅՆ. ԱՍՏ. ԵՐԿԱՅՆ. ԱՌՈՒՐՑ			
	Ժամ	Դրոշ	
Քուիթոյ	0	12	00
Քայեննա	4	12	16
Փոնթիլերի	11	12	43
Գաղղիական Գլուխ (Հայթի)	19	13	16
Չիհուահուա			
(Մէքսիկոյ)	28	13	49
Լսպահան	32	14	14
Լաբանթա	38	14	43
Քարթասոն	43	15	15

Տիթոն	47	15	46
Փարիզ	48	15	50
Արաս	50	16	16
Լուպին	53	16	46
Քոփենհագ	55	17	15
Րիկա	56	17	46
Սթոքհոլմ	59	18	15
Ապոյ	60	18	44
Տրոնթէյմ	63	20	00
Ումէա	63	20	15
Արքանկէլ	64	20	47
Ուլէա	65	21	15
Թորնէա	65	22	14
Էնոութէքիէս	68	45	09
Վարոհուա	70	66	09
Գլուխ Հիւսիսոյ	71	74	09
Մեթուէլ կղզի	75	102	09

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ինքն:

Իսկ կենդանւոյս դրսի տեսքը իր
ներսի յատկութեանցը շատ յարմար
է. նայուածքը համարձակ, ձայնը
ահեղ. մարմինը անանկ համեմատ ու
գեղեցիկ է. որ իր վրայ աղէկ կ'երեւ-
նայ թէ ոյժ ըսածդ արագաշարժու-
թեան հետ ինչպէս կը միաբանի:
Ղուկէն ինչուան գաւաղը սովորա-
բար ութը ինը ոտնաչափ է, իսկ պո-
չը չորս ոտնաչափ: Ղլուին ու վիզը
ինչուան կուրծքը երկայն ու թանձր
մազով ծածկած է. մնացած մարմինը
գրեթէ լերկ է, և դեղնագոյն:

Ստակ առիւծը արուէն շատ պրզ-
տիկ է, ու բաշ չունի: Ղարնան ատե-
նը կ'երթայ անմարդաձայն տե-
ղուանք չորս հինգ լակոտ կը ցընկնի.
մեծ ջանք կ'ընէ իր բոյնը ծածուկ
պահելու, և ինչուան իր ոտուրներուն
տեղն ալ պոչովը անյայտ կ'ընէ. ու թէ
որ յանկարծ կասկած մը առնէ, մէկէն
ձագերը ուրիշ տեղ կը փոխադրէ. իսկ
թէ որ լակոտներուն պաշտպանել ու-
զէ, ամենեւին վտանգ մը աչքին չերե-
նար ու կատաղաբար կը յարձրկի թըշ-
նամւոյն վրայ:

Ինքն ինքն որս փնտռելու ատենը
մոնչելը՝ որոտմունքի ձայն կը նմանի.
մանաւանդ երբոր արձագանգն ալ